Карине Катанян

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

այբբենարան

Сасунци Давид

Азбука армянского языка

12

уроков изучай,
На армянском
пиши и читай!

2015 год

ОТ РЕДАКТОРА

Сколько лет проживанию армян на русской земле, столько и изучению армянского языка в русской среде. Армяне довольно быстро приспосабливаются к новой среде, усваивают язык народа, в чьей стране живут, однако всегда стремятся сохранить и свой родной язык, традиции и менталитет.

В Диаспоре армянский язык преподается как иностранный язык и не может ориентироваться на учебные программы и учебники армянских общеобразовательных школ Республики Армения. Но и нельзя слепо руководствоваться методиками преподавания иностранного языка, так как данный иностранный язык имеет генетическую основу среди обучающихся, и учебный процесс надо начинать с пробуждения спящего армянского духа.

Учитывая все это, возникает необходимость создания авторских программ и учебных пособий для Диаспоры. Одним из этих пособий является букварь Карине Катанян «Сасунци Давид». Основная цель книги – формировать и развивать умения письма и чтения.

Продуктивность книги была видна в течение последних семи лет. Она прошла успешное испытание с детьми и юношами в разных учебных заведениях.

В учебном пособии «Сасунци Давид» с помощью интересной и уникальной методики, за 12 уроков (24-30 часов) обучается армянский алфавит. Учебник освобожден от сложных и лишних книжных слов, богат красивыми скороговорками, кроссвордами, веселыми авторскими стишками, разговорными словами и фразами, которые развивают навыки правильного произношения и чтения. Рабочая тетрадь с легкими и веселыми упражнениями помогает ученикам быстро усвоить графику и правописание букв. Книга предназначена для учащихся в возрасте 8-15 лет.

Каждый урок данного букваря способствует воспитанию здорового патриотизма, призывает любить Родину Армению, знакомит с праздниками, обычаями, традициями, географией, природой, учит ценить красоту, обучает этике, сохранению индивидуальности и самобытности.

В книге использована новая методика, которая основана на повторении. Несмотря на то, что учебник предназначен для детей, проживающих в России, им можно успешно преподавать и в других странах, используя вместо русских слов аналоги другого языка.

Еразик Арутюнян,
кандидат филологических наук,
автор проекта «Армат»

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Սասունցի Դավիթ» ուսումնական ձեռնարկի հիմնական նպատակը Սփյուռքում ապրող հայ երեխաների՝ հայոց լեզվով գրելու և կարդալու կարողությունների ձևավորումն ու զարգացումն է: Տարիների փորձը ցույց է տվել, որ Հայաստանի դպրոցների համար գրված այբբենարանները հարմար չեն Սփյուռքում գործածելու համար: Նախ՝ նրանք գրված են 6-7 տարեկան երեխաների համար, իսկ այստեղ սովորում են տարբեր տարիքի երեխաներ, և հետո՝ Սփյուռքում ապրող շատ հայերի համար հայոց լեզուն մայրենի լեզու չէ, ուստի այն պետք է դասավանդվի որպես օտար լեզու՝ իրենց մայրենիի (ռուսերենի) հիմքի վրա: Ուսումնական ձեռնարկը նախատեսված է Սփյուռքում ապրող 8-15 տարեկան երեխաների համար (որոնք արդեն տիրապետում են գրել-կարդալու հմտություններին):

Աշխատանքային տետր ներառող այս գրքի արդյունավետությունը նկատելի էր կիրառման յոթ տարիների ընթացքում: Տվյալ մեթոդիկան փորձարկվել է նախ անհատ երեխաների, ապա նաև խմբերի հետ: Յուրաքանչյուր դեպքում էլ կարճ ժամանակահատվածում հասել ենք լավ արդյունքի:

«Սասունցի Դավիթը» ընդգրկում է 12 դաս՝ յուրաքանչյուրը 2-3 դասաժամ տևողությամբ: Ընդամենը 36 դասաժամի ընթացքում հասնում ենք վարժ գրել-կարդալու ունակությունների ձևավորմանը: Առաջին կիսամյակում՝ վերջացնելով «Սասունցի Դավիթը», հիմք ենք ստեղծում զարգացնելու հայերեն բանավոր խոսք՝ Երազիկ Հարությունյանի «Փոքր Միհր» դասագրքով:

Գրքի մեթոդիկան հիմնվում է կրկնությունների վրա: Նոր տառերը ուսուցանվում են մեկ բառի միջոցով: Այդ բառին ծանոթանալու ընթացքում մշակվում և ամրապնդվում են տվյալ հնչյունների արտասանությունն ու մտապահումը, իսկ տվյալ հնչյուններով նոր բառեր գրելու պրոցեսում՝ ուսուցանվում և ամրապնդվում է այդ տառերի գրությունը: Սկզբում անընդհատ նայելով գրատախտակին կամ տետրում գրված բնօրինակներին, նրանք վարժվում են, մտապահում տառերը և դրանք յուրացնելով սկսում են արդեն ինքնուրույն գրել դասի բառերը:

Չնայած «Սասունցի Դավիթ» ուսումնական ձեռնարկը նախատեսված է գրել և կարդալ ուսուցանելու համար, սակայն այն ինքնաբերաբար նպաստում է նաև նախնական բառապաշարի ձևավորմանը: Յուրաքանչյուր դասի ընթացքում երեխան ծանոթանում է նոր բառերի և քայլ առ քայլ «բացվում է» նրա լեզուն: Առաջին դասի ընթացքում երեխաները գրում են արդեն 15 բառ, կազմում բառակապակցություններ: Միօրինակությունից ու ձանձրույթից խուսափելու համար յուրաքանչյուր դասի կցվում են տարաբնույթ առաջադրանքներ, որոնք երբեք չեն կրկնվում, դրանով իսկ առաջացնելով հետաքրքրություն գրքի և դասապրոցեսի նկատմամբ: Այս ամենը կատարվում է խաղային աշխույժ, մրցակցային մթնոլորտում, չի հոգնեցնում երեխաներին, որոնք հայոց լեզվի դասերին հաճախում են իրենց հանրակրթական դպրոցի պարապմունքներից հետո:

Երեխան կարդում և գրում է մեկը մեկից հետաքրքիր, ուսուցանող, զարմանալի ու զվարճալի նյութեր: Հասկանալով կարդալու և գրելու կարողության ձևավորման համար կարևոր է ոչ միայն ուսուցչի դերը, այլև ուսումնական նյութի և լեզվատրամաբանական հետաքրքրաշարժ առաջադրանքների ընձեռած հնարավորությունը:

Ուսումնական ձեռնարկում մեծ տեղ են գրավում շուտասելուկները, որոնք նախատեսված են երեխաներին զվարթացնելու, լարվածությունը թուլացնելու, մտերմիկ մթնոլորտ ստեղծելու համար: Դրանք ունեն ուսուցողական նպատակ, մարզում են հիշողությունը, արտասանական ապարատը, արտահայտիչ ու արագ կարդալու կարողությունը, մշակում են առոգանությունը:

Գրքի հեղինակային մանկական բանաստեղծությունները ոչ միայն երևակայություն և ճաշակ են զարգացնում, այլև նպաստում են հայերենի այն հնչյունների արտասանության մշակմանը, որոնք չկան ռուսերենում (հ, թ, ք, ծ, ձ, ղ, ճ, ջ, փ):

Շատ մեծ աշխուժությամբ երեխաները լուծում են հետաքրքիր խաչբառերը, որոնք նպաստում է տարբեր հմտությունների ուսուցմանն ու ամրակայմանը: Լուծման ընթացքում կատարվում է մտավոր մեծ աշխատանք: Նախ ամրապնդվում են անցած տառերը, բառերը, դրանք ճիշտ գրելու կարողությունները, կատարվում է թարգմանություն ռուսերենից-հայերեն: Երեխաները կարողանում են գործնականում ստուգել իրենց իմացած բառերի ճիշտ գրելաձևը:

Յուրաքանչյուր դաս իր մեջ ներառում է հայրենասիրություն դաստիարակելու նրբերանգներ, ծանոթացնում է ազգայինի՝ բնության, արշխարհագրության, խոհանոցի, ավանդույթների, տոների հետ, միաժամանակ արթնացնում սեր և նվիրվածություն հայրենիքի՝ Հայաստանի հանդեպ, սովորեցնում է գնահատել գեղեցիկը, բարոյականը, պահպանել մեր դեմքը, ինքնությունը՝ տարբեր ազգերի մեջ:

Շատ կարևոր է ուսուցչի ստեղծագործական մոտեցումը դասին: Քանի որ լրացուցիչ կրթական օղակի խումբը սովորաբար բաղկացած է տարբեր տարիքի և տարբեր ընդունակության երեխաներից, ուստի նրա անհատական մոտեցումը յուրաքանչյուրին շատ կարևոր է:

Սփյուռքում հայոց լեզու սովորողները բաժանվում են հետևյալ խմբերի. ա. գրական հայերենին կամ որևէ բարբառի տիրապետողներ, բ. լեզուն հասկացողներ, որոնք չեն խոսում, գ. ընդհանրապես չտիրապետողներ: Ուստի ամեն մի բառի թելադրության ընթացքում ուսուցիչը թարգմանում է այն, բացատրում նշանակությունը, նշում ազգային հատկանիշները:

Հույս ունենք, որ մեր հեղինակած ուսումնական ձեռնարկը հարյուրավոր պատանիների համար կդառնա հայոց լեզվի ուսուցման վերընթաց սանդուղքի առաջին, հիմնաքարե աստիճանը:

ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՎ

Նախքան ձեռնարկով աշխատելը ուսուցիչը ծանոթացնում է երեխաներին հայ ժողովրդի համառոտ պատմությանը, պատմում Մեսրոպ Մաշտոցի, գրերի գյուտի, նրա նշանակության ու կարևորության մասին: Ցուցադրում և սովորեցնում է այն մասնիկները, որոնց միջոցով գրվում են հայոց այբուբենի տառերը, ուշադրություն դարձնելով նրանց չափսերին:

Հմտությունների ձևավորման ամենափորձված մեթոդը կրկնություններով զուգակցվող աստիճանական քայլ առ քայլ առաջանալու աշխատանքն է: Դրա վրա էլ հիմնված է դասագրքում օգտագործված մեթոդիկան:

Դաս 1

Ուսուցիչը պատրաստում է երեխաներին դասին, անվանում դասի թեման՝ «Աշուն»: Եթե աշակերտները խոսում են հայերենին, ապա կարելի է հարց ու պատասխանի միջոցով նկարագրել աշունը, բնութագրել այն: Եթե ոչ, ապա ծանոթացնել «աշուն» բառի հետ, առաջարկել բարձրաձայն կրկնել, որի միջոցով նրանց մոտ տպավորվում և ամրակայվում են տվյալ հնչյունները: Բառի արտասանությանը տիրապետելուց հետո ուսուցիչը այն գրում է գրատախտակին, երեխաների ուշադրությունը հրավիրելով տառերի գրության ձևին, ապա առաջարկում, որ երեխաները յուրաքանչյուր տառի վերևում գրեն ռուսերեն համարժեքը: Այնուհետև երեխաները գրատախտակին հերթով գրում են նոր տառերը՝ կրկին ու կրկին ուշադրություն դարձնելով դրանց ճիշտ գրությանը, չափսերին, որից հետո ուսուցիչը առաջարկում է գրել նոր տառերի մեծատառ և փոքրատառ ձևերը տետրում՝ բնօրինակի ներքևի տողում: Երբ նա համոզվում է, որ երեխաները յուրացրել են տառերի ճիշտ գրելու ձևը, սկսում է թելադրել տվյալ հնչյուններից կազմված այլ բառեր: Երեխաները այդ բառերը գրում են դրա համար նախատեսված աղյուսակում, դիմացը գրելով թարգմանությունը: Ինչպես արդեն նշվել էր վերևում, ամեն բառի հետ տրվում են թարգմանությունը, բացատրություններ, նշվում են նաև բառի ազգային հատկանիշները: Կարելի է շեշտել, որ “շուշանը” և ծաղկի անվանում է, և աղջկա անուն, ինչպես նաև “անուշ’ բառը հանդիսանում է և որպես քաղցր բառի հոմանիշ, և որպես հատուկ անուն: Նույն կերպ ներկայացնել նաև “նշան” բառը:

Յուրաքանչյուր բառ գրելիս, ուսուցիչը հետևում է, թե արդյո՞ք ճիշտ են գրում և հարկ եղածի դեպքում ցուցումներ տալիս, ուղղումներ մտցնում:

Դասի նոր բառերը գրելու ընթացքում երեխաները անընդհատ նայում են գրատախտակին, կամ տետրում գրված բնօրինակին: Անընդհատ նայելու և գրելու ընթացքում մտապահվում են

ուսուցանվող տառերը, յուրացվում երեխայի կողմից, և նրանք աստիճանաբար սկսում եմ առանց նայելու, հեշտությամբ գրել թելադրվող բառերը: Մեծատառերը ուսուցանվում են նույն կերպ՝ թելադրելով հատուկ անուններ: Արդյունքը միանգամից նկատելի է դառնում. երեխաները դասի ընթացքում տիրապետում են նոր տառերի գրությանը:

Առաջին դասի ընթացքում երեխաները ծանոթանում են “ու” շաղկապին և միանգամից սկսում օգտագործել (Աննան ու Շուշանը:) Կարելի է ուղղել նաև երեխաներին. “Ի՞նչ է քո անունը” հարցը: Սովորեցնել երեխաներին հասկանալ հարցի իմաստը և ճիշտ պատասխանել: Առաջարկել կազմել “ուշ աշուն” և “անուշ նուշ” բառակապակցությունները, որոնք երեխաները կթարգմանեն ինքնուրույն:

Ծանոթացնել ձայնավոր և բաղաձայն հնչյունների, մեծատառերի, փոքրատառերի, հատուկ և հասարակ անունների հետ:

Դասի ընթացքում անհրաժեշտ է երեխաների ուշադրությանը հրավիրել հայերենի բաղաձայն հնչյունների՝ ռուսերենի համեմատ ավելի կոշտ արտաբերմանը:

Նույն մեթոդով երեխաները ծանոթանում են տպագիր տառերին և ձևավորվում է հայերեն կարդալու ունակությունները արդեն դասագրքի հետ աշխատելու ընթացքում: Ինչպես արդեն նշվել էր վերևում, սրան շատ է նպաստում գրքի մեթոդական կառույցում ընդգրկված բազմաբնույթ և համակարգված առաջադրանքների ամբողջությունը: Երեխաները դասի ընթացքում կարդում են և› շշուկով, և› բարձրաձայն, որն էլ հանդիսանում է անգնահատելի պայման սահուն կարդալու համար:

Դաս 2

“Կարկուտ”: Ուսուցանվում են Կ,Տ,Ր տառերը՝ նույն մեթոդով: Միաժամանակ կրկնվում և ամրապնդվում են անցած տառերը: Նոր բառերը թելադրելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բառերի վրա, որոնցում կա գաղտնավանկի “ը” (կտուր, տնակ, կտակ, նկար, կրակ): Փորձը ցույց է տալիս, որ ռուսախոս երեխաների համար դժվար ըմբռնելի է գաղտնավանկի “ը”-ի առկայությունը բառի մեջ և հաճախ նրանք բառը գրում են սխալ (նեկար): Այդ պատճառով պետք է հատուկ շեշտել, որ տվյալ բառերում բաղաձայների արանքում լսում ենք “ը” հնչյունը, սակայն չենք գրում: Հետո դրան մանրամասը կանդրադառնանք “Ը” հնչյուն- տառը անցնելիս:

Հատուկ անունները գրելիս, կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության և Պատմական Հայաստանի քաղաքները, շեշտել, որ Արարատ լեռը միշտ էլ հանդիսացել է Հայաստանի խորհրդանիշ, որ ունենք այդ անվամբ քաղաք, և օգտագործվում է որպես անձնանուն:

Բառակապակցություն կազմելիս ուշադրություն հրավիրել բառերի հնչյունափոխությանը (աշուն-աշնան, տուն-տան):

Այս դասին թարգմանության միջոցով երեխաները լրացնում են խաչբառ: Եթե նույնիսկ երեխան մոռացել է տվյալ բառի թարգմանությունը, ապա նա փնտրում և կարդում է այն, միաժամանակ մշակվում է բառը ճիշտ գրելու կարողություն:

Այս դասին երեխաները գրում են նաև առաջին նախադասությունը, ուստի անհրաժեշտ է ծանոթացնել վերջակետին: Կարելի է նշել, որ ստորակետը և ձևով, և կիրառությամբ նման է ռուսերենի ստորակետին, իսկ վերջակետը տարբերվում է: Քանի որ գրվող նախադասությունները հրամայական են, ապա անհրաժեշտ է ծանոթացնել նախադասության տեսակներին, ինչպես նաև առոգանության նշաններին՝ ռուսերենի հետ համեմատություններով: (Арам принес книгу? Արա՞մը բերեց գիքը: Արամը բերե՞ց գիքը: Արամը բերեց գի՞քը:): Նույն կերպ ներկայացնել շեշտը և բացականչական նշանը: Այս տարիքում պետք չէ երեխաներին ծանրաբեռնել կանոններով և բացատրություններով, բավական են կոնկրետ բերվող օրինակներն ու համեմատությունները, որոնք ավելի հեշտ են յուրացվում:

Դաս 3

“Վերմակ”: Ուսուցանվում են Վ, Ե, Է, Մ տառերը: «Վերմակ» բառը բացատրելիս, կարելի է նշել, որ հայկական կենցաղում անկողնու պարագաները կարվել են բրդից, թե ինչպես են մշակել այն,

և որ մինչև օրս էլ Հայաստանում ամառվա շոգին կարելի է տեսնել, թե ինչպես են հայ կանայք չորացնում բուրդը և այլն:

Դասի նոր բառերում են “մեկ” և “երկու” թվականները, ուստի կարելի է սովորեցնել հաշվել:

Այս դասին երեխաները ծանոթանում են օժանդակ բայի հետ, որը կիրառություն չունի ռուսերենում: Օժանդակ բայն ունի դեմք, թիվ, ժամանակ, (առաջին, երկրորդ, երրորդ դեմքեր, եզակի ու հոգնակի թիվ, ներկա ու անցյալ ժամանակ):

” Է” և “ե” տառերի ուղղագրությունը բացատրելիս, պետք է նշել, որ այն նման է ռուսաց լեզվի “Э”, “Е” համարժեք տառերի ուղղագրությանը: Նշել բացառություն կազմող օժանդակ բայերը (եմ, ես, ենք, եք, են) :

Երեխաները սովորում են նաև եզակի թվից կազմել հոգնակի թիվ (միավանկ բառերին ավելանում է “եր”, իսկ բազմավանկ բառերին “ներ” վերջավորությունը): Այստեղ նույնպես հարկ է նշել բացառություն կազմող ծանոթ բառերը:

Դասում զետեղված են երկու շուտասելուկներ, որոնք ուսուցչի օգնությամբ ցանկալի է սովորել անգիր:

Դաս 4

“Լուսին”: Ուսուցանվում են Լ, Ս, Ի, Ը տառերը: Երեխաների ուշադրությունը հրավիրել ռուսական երկու իմաստ ունեցող “месяц” բառի հայկական երկու տարբերակների՝ կիսալուսին և ամիս բառերի վրա: Առանձնահատուկ կերպով ներկայացնել լավաշը, որպես ազգային հարստություն: Շարունակել հաշվի ուսուցումը: Շատ հեշտությամբ երեխաները յուրացնում են հաշիվը հետևյալ ոտանավորի միջոցով.

Մեկ, երկու, երեք,
Մեկ ձմերուկ բերեք,
Չորս, հինգ, վեց,
Վա՜յ, ընկավ, կոտրվեց,
Յոթ, ութ, ինը,
Ի՞նչ է սրա գինը,
Տասը՝
Կվճարեմ վնասը:

“Ը” տառը ուսուցանելիս կանգ առնել ուղղագրության վրա. բառասկզբում գրվում է միայն ղ, մ, ն բաղաձայներից առաջ և ըստ բառում, բառամիջում, եթե նրանով սկսվող բառարմատի վրա սկզբից ավելացել է որևէ արմատ, կամ նախածանց:

Դասում զետեղված տարբեր վարժությունների միջոցով ամրապնդել գաղտնավանկի “ը” ունեցող բառերի ճիշտ գրությունը (այն գրվում է միայն տողադարձի ժամանակ): Ծանոթացնել նաև որոշյալ առմանը (Ը-ն ավելանում է բաղաձայնով վերջացող բառերին, ն-ն՝ ձայնավորով վերջացողներին (անունը, նկարը, շունը, բայց՝ կատուն, տարին): Այս դեպքում նույնպես, ինչպես ցույց է տալիս տարիների փորձը, ռուսախոս երեխանները հաճախ են սխալ գրում ը-ն փոխարինելով ե-ով: Այդ պատճառով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ռուսերենում բացակայող «ը» հնչյունի ուղղախոսությանն ու ուղղագրությանը:

Ծանոթացնել ս և դ հոդերի հետ: Այս հոդերը միասնաբար արտահայտում են իմ, քո դերանունների և որոշիչ հոդի իմաստը՝ տատիկս – իմ տատիկը, ընկերդ – քո ընկերը: Այս բոլորը ամրապնդվում են դասում տեղ գտած վարժությունների միջոցով:

Դաս 5

“Պայուսակ”: Ուսուցանվում են Պ, Յ, և, տառերը: Դասի նոր բառերը գրելիս երեխաներին ծանոթացնել գույների, ամսվա, (ցանկալի է օգտագործել լրացուցիչ դիդակտիկ նյութեր, նկարներ): Մոլորակների անվանումները գրելու ընթացքում նշել, որ դրանք ունեն իրենց հայկական տարբերակները Մերկուրի (Փայլածու), Վեներա (Արուսյակ), Երկիր, Մարս (Հրատ), Յուպիտեր (Լուսնթագ), Սատուրն (Երևակ), Ուրան, Նեպտուն:

Բացատրել “յ” կիսաձայնի ուղղագրությունը (երկու ձայնավորների արանքում լսվող “յ”-ն գրվում է միայն “ա”-ից և “ո”-ից հետո, ուշադրությունը հրավիրել ռուսական я, ю, е տառերին, որոնք հայերենում գրվում են երկու տառի միջոցով՝ յա, յու, յո), “և”-ի ուղղագրությունը: Նյութը ամրապնդել վարժությունների միջոցով: Հատկապես լավ արդյունք է տալիս “և”-ի ուղղագրության ամրապնդման նպատակով խաչբառի լրացումը:

Դաս 6

“Հորիզոն”: Ուսուցանվում են Հ, Օ, Ո, Զ տառերը: Շարունակել հաշվի ուսուցումը՝ ծանոթացնելով տասնյակների, հարյուրի, հազարի հետ: Կրկնել ամսվա, ծաղիկների անվանումները: Բացատրել, որ չնայած հայոց լեզուն չունի քերականական սեռ, բայց անձ ցույց տվող բառերը երբեմն ունենում են արական և իգական սեռ, վերջինս կազմվում է արականին «ուհի» վերջածանցը ավելացնելով: Բացատրել “օ”-ի և “ո”-ի ուղղագրությանը, չմոռանալով ներկայացնել բացառություն կազմող բառը՝ ով (հոգնակին՝ ովքեր): Այս ամենը ամրապնդվում է վարժությունների միջոցով:

Ցանկալի է այս դասը վերածել հայրենասիրության դասի, քանի որ նրանք արդեն կարողանում են գրել մեր հայրենիքի անվանումը: Կարելի է դիտել տեսահոլովակ Հայաստանի մասին, ներկայացնել որոշ ավանդույթներ, տոներ, պատմել, թե ինչպես են հայերը հարևանություն անում:

Բանաստեղծությունը ցանկալի է սովորել անգիր՝ ուսուցչի օգնությամբ:

Դաս 7

“Գնացք”: Ուսուցանվում են Գ, Ք, Ց տառերը: Նոր տառերի ուսուցմանը համընթաց այս դասին ամրապնդել անցած նյութերը: Ծանոթացնել «ընտանիք» հասկացությանը: Կատարելագործել բայի ներկա ժամանակի ճիշտ գործածությունը:

Դաս 8

“Թռչուն”: Ուսուցանվում են Թ, Ռ, Չ, Ֆ տառերը: Ծանոթացնել ընտանի կենդանիների և թռչունների որոշ խմբի հետ : Ծանոթացնել բայի ժխտական ձևին: Անցած նյութերի ամրապնդում:

Դաս 9

“Դեղձ”: Ուսուցանվում են Դ, Ղ, Ձ տառերը: Ծանոթացնել «քաղաք», «գյուղ» հասկացությանը, ներկայացնելով մայրաքաղաքներ Մոսկվան և Երևանը, ինչպես նաև Հայաստանի քաղաքները: Շարունակել գույների ուսուցումը: Միաժամանակ կարելի է ստուգել երեխաների ստացած գիտելիքների պաշարը, տառերի իմացությունը: Դրան կնպաստի փոքրիկ շարադրությունը: Վարժեցնել բայի ապառնի ժամանակի ճիշտ կիրառում:

Դաս 10

“Ծաղկեփունջ”: Ուսուցանվում են Ծ, Փ, Ջ տառերը: Շարունակել բառապաշարի հարստացման աշխատանքները (ծաղիկների, մրգերի անվանումներ), բերել հականիշ բառաշարքեր: Համառոտ տեղեկություն տալ գոյականի, բայի մասին:

Դաս 11

“Բժիշկ”: Ուսուցանվում են Բ, Ժ տառերը: Բառապաշարի հարստացումը շարունակել՝ ծանոթացնելով բանջարեղենների անվանումներին, ամրապնդել տարվա եղանակների և ամիսների անվանումները: Ծանոթացնել ածական անվանը: Տալ տեղեկություն պարզ և բարդ բառերի մասին: Վարժեցնել բայի անցյալ ժամանակի ճիշտ կիրառում:

Դաս 12

“Խճանկար”: Ուսուցանվում են Խ, Ճ տառերը: Ներկայացնել խաչքարը, որպես հայկական արվեստի տեսակ: Վարժեցվում է բայի անցյալ ժամանակի ճիշտ կիրառում: Տալ տեղեկություն ածանցավոր բառերի, հոմանիշների մասին:

◆ Տառերի ուսուցումը ավարտելուց հետո առաջադրանքները գրվում են հայերեն: Դասի վերջում կան ազատ տողեր, որոնք օգտագործվում են ուսուցչի հայեցողությանբ: Առաջադրվում են վարժություններ այն թեմաների վերաբերյալ, որոնք ըստ ուսուցչի թերի են յուրացվել աշակերտների կողմից:

Կարինե Կատանյան

АРМЯНСКИЙ АЛФАВИТ

Աա	а	Ա ա	Յյ	й	Յ յ
Բբ	б	Բ բ	Նն	н	Ն ն
Գգ	г	Գ գ	Շշ	ш	Շ շ
Դդ	д	Դ դ	Ոո	во	Ո ո
Եե	е	Ե ե	Չչ	ч	Չ չ
Զզ	з	Զ զ	Պպ	п	Պ պ
Էէ	э	Է է	Ջջ	дж	Ջ ջ
Ըը	э*	Ը ը	Ռռ	рр	Ռ ռ
Թթ	т*	Թ թ	Սս	с	Ս ս
Ժժ	ж	Ժ ժ	Վվ	в	Վ վ
Իի	и	Իի	Տտ	т	Տ տ
Լլ	л	Լ լ	Րր	р	Ր ր
Խխ	х	Խ խ	Ցց	ц	Ց ց
Ծծ	ц*	Ծ ծ	Ուու	у	Ու ու
Կկ	к	Կ կ	Փփ	п*	Փ փ
Հհ	h	Հ հ	Քք	К*	Քք
Ձձ	дз	Ձ ձ	ԵՒ	ев	ԵՒ
Ղղ	гх	Ղ ղ	Օօ	о	Օ օ
Ճճ	тч	Ճ ճ	Ֆֆ	ф	Ֆ ֆ
Մմ	м	Մ մ			

УРОК 1

а	ш	у	н	А,	Ш ,	У,	Н
ա	շ	ու	ն	Ա,	Շ,	Ու,	Ն

աշուն շուն
անուն նշան
անուշ նուշ
ուշ նա
շուշան ու
Աննա, Շուշան, Անուշ, Նշան, Աշան

Ուշ աշուն Անուշ նուշ

а ш у н А, Ш, У, Н

1. Под диктовку напиши (спиши) новые слова урока и переводы.

СЛОВО	ПЕРЕВОД	СЛОВО	ПЕРЕВОД

2. Как зовут хозяек собаки? Напиши.

А собаку?

3. Попробуй написать так же красиво.



УРОК 2

к а р к у т
կ ա ր կ ու տ

К Т Р
Կ, Տ, Ր

կարկուտ
տուր
տուն
տնակ
տանկ
շարան
կտակ
կտուր
արա



շուտ
նկար
կատու
կուշտ
շուկա
տար
կրակ
կատակ
տակ

Արշակ, Արտաշ, Արտակ, Նատաշա,
Արտաշատ, Աշտարակ, Արարատ

Տան կտուր

Աշնան շուկա



к а р к у т К, Т, Р



1. Под диктовку напиши (спиши) новые слова урока и переводы.

СЛОВО	ПЕРЕВОД	СЛОВО	ПЕРЕВОД

2. Составь словосочетания и напиши их.

տուն, կտուր_____

աշուն, շուկա_____

3. Заполни таблицу.

Имена мальчиков	Имена девочек	Название городов

4. Реши кроссворд (6 X 6).

По горизонтали: 1. огонь 2. осень 3. град 4. поздно 5. сладкий 6. домик

По вертикали: 1. рисунок 2. кошка 3. завещание 4. сыто 5. имя 6. рынок



5. Спиши предложения.

Արտա՛շ, նկա՛ր տուր:

_____

Արտա՛կ, կրա՛կ արա:

_____

Շուշա՛ն, նու՛շ տար:

_____

Նատաշա՛, շու՛տ արա:

_____

УРОК 3

е	р	м	а	к	(э)	В	Е	Э	М		
վ	ե	ր	մ	ա	կ	(է)	Վ,	Ե,	Է,	Մ	

վերմակ	մանուկ	մենակ
շեկ	վատ	նավ
մաշկ	մկրատ	նավակ
մուկ	կամար	շատ
մանր	վրա	նամակ
մարտ	մատ	մանուշակ
ներկ	ամուր	մուշտակ
մեկ	տեր	վերարկու
ատամ	նվեր	աշակերտ

СКОРОГОВОРКА

Ներկեր ուներ մեր Նարեն,
Նկարում էր նավակեր:

в е р м а к э В Е Э М



1. Под диктовку напиши (спиши) новые слова урока и переводы.

СЛОВО	ПЕРЕВОД	СЛОВО	ПЕРЕВОД

2. Спиши сначала имена девочек, потом мальчиков.

Ե ե Է է

երկու
երամ
երեկ
երկար
եկա
եկար
եկավ

է
էր
էշ
էակ
էական
էկրան
մանրէ

Էմմա, Վերա, Նարե, Մանուշակ, Մանե,
Նարեկ, Շերամ, Արմեն, Արման, Երեմ

Երեկ Մանեն նկարում էր:
Նրա նկարներում մանուշակներ ու շուշաններ են:

Նարեն աշակերտ է:
Նրան նամակ կտամ:
Նամակում երկու նկար կա:

С К О Р О Г О В О Р К А

Կատուն մուկ կերավ,
Ու կուշտ տուն մտավ:

3. Слова в единственном числе пиши во множественном.

նավ- _____

ներկ- _____

էշ- _____

նկար - _____

նվեր- _____

ատամ- _____

տուն- _____

էկրան - _____

4. Под диктовку напиши (спиши) новые слова урока и напиши переводы.

СЛОВО	ПЕРЕВОД	СЛОВО	ПЕРЕВОД

5. В место пропущенных букв пиши ե или է.

__րկու, __կրան, __ր__կ, __րկար, __շ, մ__նակ, __ակ, մ__կ, մանր__

6. Реши кроссворд (10 X 10).

По горизонтали:

1. палец, 2. крепко, 3. ученик, 4. письмо, 5. корабль, 6. март, 7. вчера, 8. ножницы, 9. одеяло, 10. малыш.

По вертикали:

1. шуба, 2. Под, 3. плохой, 4. мышка, 5. длинный, 6. пальто, 7. арка, 8. зуб, 9. на, над, 10. экран.



УРОК 4

Л у с и н (э’)	Л, С, И, Э’
Լ ու ս ի ն (ը)	Լ, Ս, Ի, Ը

լուսին	միասին	սեր
կիսալուսին	սիրելի	ես
լիալուսին	ամիս	լավաշ
երանի	ինը	շիլա
կարմիր	տասը	ունի
երես	տասնմեկ	շինարար
լուսամուտ	տասներկու	ուշիմ
իրիկուն	երեսուն	իմ
երշիկ	իննսուն	սանր
տատիկ	նավաստի	սանիկ
ուսում	տարի	ելակ
մատիտ	լավ	լուսակիր

Մելինե, Նարինե, Կարինե, Լուսինե, , Մարինե, Ալինա,
Լիանա, Էմին, Սուրեն, Սասուն,
Իտալիա, Վրաստան, Արմավիր, Արարատ, Մասիս

ունեմ	կերա	մտա	կտամ
ունես	կերար	մտար	կտաս
ունի	կերավ	մտավ	կտա

л у с и н ы Л С И Ы

Լուսին ը Լ, Ս, Ի, Ը

1. Под диктовку напиши (спиши) новые слова урока и переводы.

СЛОВО	ПЕРЕВОД	СЛОВО	ПЕРЕВОД

Ը ը

ընկեր
ընտրել

ընտիր
ընկնել

ընկա
ընկար
ընկավ

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ը

Էմինը նավաստի է: Նա երեսուն տարեկան է: Էմինը շատ ընկերներ ունի: Արամն ու Սամվելը նրա մտերիմ ընկերներն են: Արամը ուսանում է Արմավիրում, իսկ Սամվելը լավ շինարար է:

Շ ՈՒ Տ Ա Ս Ե Լ ՈՒ Կ

Ասա՝ էս սուրը Սանասարինն է,
Իսկ նա Սիս սարի սուր կատարին է:

2. Напиши.

Имена девочек_____

_____

Имена мальчиков_____

_____

3.Напиши (спиши) новые слова урока на букву «Ը»

СЛОВО	ПЕРЕВОД	СЛОВО	ПЕРЕВОД

4. Слова в неопределенной форме напиши в определенной форме.

Էմմա- Էմման

Արմեն- _____

կատու- _____

մատիտ- _____

լուսին- _____

երշիկ- _____

լավաշ- _____

շիլա- _____

ԿԱՏԱԿԱՍԵՐ ԷՄՄԱՆ

Էմման շատ է սիրում կատակներ անել: Նա մանուշակներ էր նկարել ու մարտի 8-ին նվիրել էր Արմանին ու Արշակին:

ԻՄ ՏԱՏԻԿԸ

Իմ տատիկի անունը Շուշան է: Ես նրան շատ եմ սիրում: Տատիկիս տանը միշտ ընտիր լավաշ է լինում: Իմ սիրելի տատիկին նվիրելու եմ մի սիրուն նկար:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Շիլա կտամ, երշիկ կտաս,
Երշիկ կտամ, լավաշ կտաս,
Լավաշ կտամ, շիլա կտաս:

5. Продолжай (Շարունակի՛ր).

Իմ տատիկը - տատիկս
Իմ ընկերը - _____
Իմ սանրը - _____
Իմ երեսը - _____
Իմ մատանին - _____

6. Данные слова раздели на слоги.

նկար- նը-կար
մկրատ- _____
ընտիր- _____
սանր- _____
ընկնել- _____
նվեր- _____
տնակ- _____

А теперь наоборот.

կը- րակ- _____
մա- նըր- _____
ըն- կեր- _____
կը- տուր- _____
ընտ-րել- _____
մը- շուշ- _____
կը- տավ- _____

Ա

Ազգ	нация
ազգանուն	фамилия
աթոռ	стул
ալյուր	мука
աղ	соль
աղավնի	голубь
աղջիկ	девочка
աղվես	лиса
աղցան	салат
ման	посудина
Ամանոր	Новый год
ամառ	лето
ամբողջ	весь
ամեն	каждый
ամեն օր	каждый день
ամիս	месяц
ամուր	крепко
ամպ	облако
այգի	сад, парк
այլև	так же
այծ	коза
այն	то
այնտեղ	там
այո	да
այս	этот
այստեղ	здесь
այսքան	столько
այսօր	сегодня
այտ (թուշ)	щека
այրել	сжечь,сжигать
անել	делать, сделать,
անծանոթ	незнакомый
անհամ	невкусный

անհուն	безграничный
անձեռոցիկ	салфетка
անձրև	дождь
անմիջապես	сейчас же
անուն	имя
անուշ	вкусный, на здоровье
անպայման	безусловно
անտառ	лес
անտառապահ	лесник
անցորդներ	прохожие
աշակերտ	ученик
աշխատասենյակ	кабинет
աշխարհ	мир, свет
աշուն	осень
աչքեր	глаза
ապուր	суп
ապրել	жить, пожить,
ապրելակերպ	образ жизни
ապրես	молодец, умница
աջ	правый
առաջին	первый
առաստաղ	потолок
առավոտ	утро
առավոտյան	утром
առողջություն	здоровье
առու	ручей
առույգ	бодрый
ասեղ	иголка
աստղ	звезда
ավազ	песок
ավան	поселок
ավերակ	руины
ավտոբուս	автобус
ավտոմեքենա	автомобиль
ատամ	зуб
արագ	быстро
արագիլ	аист

արև	солнце
արևելք	восток
արևմուտք	запад
արթնանալ	просыпаться, проснуться,
արժանի	достойный
արծիվ	орёл
արյուն	кровь
արջ	медведь
արտասանել	произносить, произнести,
ափսե	тарелка
ափսոս	жаль, увы
աքլոր	петух

Բ

բադ	утка
բազկաթոռ	кресло
բազմոց	диван
բազուկ	свёкла
բաժակ	стакан
բաժին	доля
բալ	вишня
բալիկ	деточка, малыш
բախտ	счастьеб судьба
բակ	двор
բաճկոն	куртка
բանալի	ключ
բանջարեղեն	овощи
բարեկամ	друг, родственник
բարև	здравствуй
բացել	открывать, открыть,
բարի ախորժակ	приятного аппетита
բարձ	подушка
բարձր	высокий, высоко,
բերան	рот
բերդ	крепость
բերել	приносить, принести,
բժիշկ	врач

բլուզ	блузка
բնություն	природа
բույս	растение
բույր	аромат
բռնել	держать, хватать, ловить

Գ

գագաթ	вершина
գազար	морковь
գայլ	волк
գանգուր	кудрявый
գավաթ	кружка, чашка
գարուն	весна
գդալ	ложка
գեղեցիկ	красивый
գետ	река
գետին	земля
գիծ	линия
գիշեր	ночь
գիտենալ	знать, ведать
գիրք	книга
գլխարկ	шапка
գլորվել	катиться
գլուխ	голова
գյուղ	деревня, село
գնալ	идти, пойти, отправляться
գնահատական	оценка
գնացք	поезд
գնդակ	мяч
գնել	купить
գորգ	ковёр
գորշ	серый
գուլպա	носки
գույն	цвет
գույնզգույն	разноцветный

գտնվել	находиться
գրապահարան	книжный шкаф
գրասեղան	письменный стол
գրել	писать, написать
գրիչ	ручка
գցել	бросать

Դ

դահլիճ	зал
դանակ	нож
դաս	урок
դասարան	класс
դեղ	лекарство
դեղատուն	аптека
դեղին	жёлтый
դեղձ	персик
դեղձանիկ	канарейка
դերձակ	портной
դժբախտ	несчастный
դիտել	смотреть, посмотреть,
դիր	положи, клади
դնել	класть, положить,
դու	ты
դուռ	дверь
դուր գալ	нравиться
դուք	вы
դպրոց	школа
դրախտ	рай
դրոշ	флаг

Ե

ելակ	клубника
եկեղեցի	церковь
եղբայր(իկ)	брат
եղևնի	ель
ես	я
երազել	мечтать

երակ	вена
երամ	стая
երանի	хоть бы
երբ	когда
երգել	петь, спеть
երեխա	ребёнок
երեկ	вчера
երեկո	вечер
երեկոյան	вечером
երես	лицо
երեսուն	тридцать
երևի	наверно
երեք	три
երեքշաբթի	вторник
երկար	длинный
երկինք	небо
երկիր	страна, Земля
երկու	два
երկուշաբթի	понедельник
երկրորդ	второй
երշիկ	колбаса
երջանկություն	счастье
եփել	варить, сварить

Զ

զամբյուղ	корзина
զանազան	разнообразный
զատիկ	1.божья коровка, 2.Пасха
զարդարել	наряжать, нарядить,
զգեստ	платье
զգեստապահարան	гардероб
զգույշ եղիր	будь осторожен
զով	прохладный
զորավար	полководец
զուգարան	туалет
զրուցել	беседовать

Է

էակ	существо
էական	существенный
էկրան	экран
էշ	осел

Ը

ըմպելիք	напиток
ընթրել	ужинать, поужинать
ընթրիք	ужин
ընկեր	товарищ, приятель,
ընկնել	упасть, падать, пасть
ընկույզ	грецкий орех
ընտանի	домашний
ընտանիք	семья
ընտիր	отборный
ընտրել	выбирать

Թ

թանձր		густой
թավա		сковородка
թարթիչներ		ресницы
թարմ		свежий
թել		нить
թեյ		чай
թթու		кислый
թթվասեր		сметана
թիթեռ		бабочка
թիվ		число
թխել		печь, выпекать, выпечь
թուզ	թուզ	инжир
թոնիր		тундир
թոռնիկ		внук
թութակ		попугай
թուղթ		бумага
թույլ		слабый
թռչել		(у) летать, (у)лететь,

Ժ

ժամ	час
ժամացույց	часы
ժայռ	скала
ժանյակ	кружево
ժապավեն	лента
ժլատ	скупой, жадный
ժողովուրդ	народ
ժպիտ	улыбка

Ի

իհարկե	конечно
իմ	мой, моя, моё
ինը	девять
իննսուն	девяносто
ինչ	что
ինչո՞վ	на чём? с чем?
ինչպե՞ս	как?
ինչքա՞ն	сколько?
ինչպիսի	какой
ինքը	он, она
ինքնաթիռ	самолёт
իսկ	а
իրենք	они
իրիկուն	вечер

Լ

լայն	широкий, широко
լավ	хорошо, хороший
լեզու	язык
լիալուսին	полнолуние
լոգասենյակ	ванная комната
լոլիկ	помидор
լողալ	плавать, плыть, поплыть
լոր(իկ)	перепёлка
լուսակիր	светофор
լուսամուտ	окно
լուսավոր	светлый, светло

լուսին	луна
լվացվել	умываться, умыться,

Խ

խաղալ	играть
խաղալիք	игрушка
խաղող	виноград
խանութ	магазин
խաչ	крест
խելոք	умный, послушный
խեղճ	жалкий, бедный
խմել	пить, выпить
խնդրել	просить, попросить
խնդրեմ	пожалуйста
խնձոր	яблоко
խոհանոց	кухня
խոշոր	крупный, большой
խոսել	говорить, поговорить
խորոված	шашлык
խուճապ	паника

Ծ

ծածկել	закрыть
ծաղիկ	цветок
ծաղկել	цвести, расцветать,
ծամոն	жвачка
ծանոթանալ	знакомиться,
ծառ	дерево
ծարավ	жажда
ծափ	хлопок
ծիածան	радуга
ծիծաղ	смех
ծիտիկ	птичка
ծիրան	абрикос
ծննդյան օր	день рождения
ծնողներ	родители
ծնունդ	рождение

ծնվել	рождаться, родиться
ծով	море
ծովափ	побережье, пляж,
ծույլ	ленивый
ծրագիր	программа

Կ

կա	есть (имеется)
կաթ	молоко
կաթիլ	капля
կաթսա	кастрюля
կակաչ	тюльпан
կահույք	мебель
կաղամբ	капуста
կաղնի	дуб
կամար	арка
կայարան	вокзал
կանաչ	зелёный
կանաչի	зелень
կանգնել	стоять, вставать, встать,
կաշի	кожа
կապույտ	синий
կատակ	шутка
կատու	кошка
կար	шитье
կարագ	масло сливочное
կարապ	лебедь
կարդալ	читать, прочитать,
կարթ	удочка
կարկուտ	град
կարմիր	красный
կարոտ	тоска
կեղտոտ	грязный
կենդանի	живой, животное
կեչի	береза
կեռ	крюк
կեռաս	черешня

կեսօր	полдень
կին	женщина, жена
կիսալուսին	месяц (луна)
կիրակի	воскресенье
կլոր	круглый
կյանք	жизнь
կոշիկ	обувь
կոշտ	грубый
կով	корова
կորիզ	косточка
կուշտ	сыто
կտակ	завещание
կտավ	холст
կտուր	крыша
կրակ	огонь
կրկնել	повторять, повторить

Հ

հագնել	надеть, надевать
հագնվել	одеться, одеваться
հագուստ	одежда
հագցնել	одеть, одевать
հազար	тысяча
հաղարջ	смородина
հաճախ	часто
հաճույքով	с удовольствием
համալսարան	университет
համակարգիչ	компьютер
համբուրել	целовать, поцеловать
համով	вкусный
հայ	армянин
Հայաստան	Армения
հայրանուն	отчество
հայրիկ	папа
հանգստանալ	отдыхать, отдохнуть
հանգստյան օրեր	выходные
հանել	вынимать, вынуть, вытаскивать,

հանրախանութ	универмаг
հաշվել	считать, посчитать
հաջողություն	удачи, удача
հասակ	рост
հասարակ	простой
հասկ	колос
հավ	курица
հավանել	нравиться
հավատալ	верить
հավաքել	собирать, собрать,
հավիտյան	вечно
հատակ	пол
հատուկ	особый, специальный
հարավ	юг
հարգանք	уважение
հարևան	сосед
հարկ	этаж
հարմար	удобный
հարյուր	сто
հարս	невеста
հարսանիք	свадьба
հաց	хлеб
հեռանալ	удаляться, удалиться,
հեռուստացույց	телевизор
հետաքրքիր	интересный
հետևել	следить
հետևում	за, позади
հեքիաթ	сказка
հզոր	могучий
հին	старый
հինգ	пять
հինգշաբթի	четверг
հիսուն	пятьдесят
հյուսիս	север
հյուր	гость
հյուրասենյակ	гостиная

հնձվոր	косарь
հող	земля, почва
հոն	кизил
հով	прохладный
հովանոց	зонтик
հորաքույր	тетя (сестра отца)
հորդ	проливной
հուզվել	волноваться, возмущаться
հուլիս	июль
հույս	надежда
հունիս	июнь
հունվար	январь
հրավիրել	приглашать

Ձ

ձագ	птенец
ձայն	голос
ձեռնոցներ	перчатки
ձեռք	рука
ձի	лошадь
ձմեռ	зима
ձմեռ	зима
Ձմեռ պապիկ	Дед Мороз
ձմերուկ	арбуз
ձյուն	снег
Ձյունանուշ	Снегурочка
ձնագունդ	снежок
ձնեմարդ	снеговик
ձնծաղիկ	подснежник
ձոր	ущелье
ձու	яйцо
ձուկ	рыба

Ղ

ղեկ	руль
ղեկավար	руководитель

Ճ

ճազար	кролик
ճախրել	парить, порхать
ճակատ	лоб
ճահիճ	болото
ճանապարհ	дорога
ճաշ	обед
ճաշասենյակ	столовая
ճաշել	обедать, пообедать
ճարպիկ	ловкий
ճիճու	червь
ճկուն	гибкий
ճյուղ	ветка
ճնճղուկ	воробей
ճոխ	пышный, роскошный
ճուտ	цыпленок
ճրագ	факел

Մ

մազեր	волосы
մածուն	мацун
մահճակալ	кровать
մայիս	май
մայրամուտ	закат
մայրիկ	мама
մանկապարտեզ	детский сад
մանուկ	ребенок, дитя
մանուշակ	фиалка
մանր	мелкий
մանրէ	микроб, бактерия
մաշկ	кожа
մասուր	шиповник
մատ	палец
մատանի	колцо
մատիտ	карандаш
մարդ	человек

մարտ	март
մաքուր	чистый
մեծ	большой
մեկ	один
մեկնել	отъезжать, отъехать,
մեղու	пчела
մեղր	мёд
մենակ	одиноко
մենք	мы
մեջ	в (внутри)
մեջք	спина
մեքենա	машина
մթերային	продуктовый
մի անգամ	один раз
մի հատ	один, одна, одно
միասին	вместе
միևնույն է	все равно
միշտ	всегда
միջատ	нфсукомое
միս	мясо
միրգ	фрукт, фрукты
մկրատ	ножницы
մշուշ	туман
մոմ	свеча, свечка
մոշ	ежевика
մոռ	малина
մոտ	возле, около, у, рядом
մոտենալ	подходить, подойти,
մորաքույր	тетя (сестра матери)
մորթի	мех
մուշտակ	шуба
մուր	копоть, сажа
մուրաբա	варенье
մտածել	думать, подумать,
մտերիմ	близкий
մտնել	заходить, зайти,

մրջյուն	муравей
մրսել	отмерзать, отмерзнуть
մրցում	соревнование

Յ

յասաման	сирень
յոթ	семь
յոթանասուն	семьдесят

Ն

նա	он, она
նաև, նույնպես	так же
նախաճաշ	завтрак
նամակ	письмо
նայել	смотреть
նապաստակ	заяц
նավ	корабль
նավաստի	моряк
նավավար	рулевой
նարինջ	апельсин
նեղ	узкий, узко
ներարկիչ	шприц
ներեցեք, ներողություն	простите, извините
ներկ	краска
նիհար	худой
նկար	рисунок, картина
նկարել	рисовать, нарисовать
ննջասենյակ	спальня
նոր	новый
նուշ	миндаль
նուռ	гранат
նստած	сидя
նստարան	лавка, скамейка, парта
նստել	сидеть, садиться, сесть
նվեր	подарок
նրանք	они

Շ

շաբաթ	неделя, суббота
շալվար	брюки
շապիկ	майка, рубашка
շատ	много, очень
շարան	вереница
շաքար	сахар
շեկ	русые
շենք	здание
շեշտ	ударение
շերեփ	ковш
շիլա	каша
շինարար	строитель
շնորհակալություն	спасибо
շնորհավոր	с праздником
շնորհավորել	поздравлять, поздравить
շնչել	дышать
շշուկ	шепот
շոգ	жара
շոյել	гладить, поглаживать,
շոր	одежда, платье
շուկա	рынок
շուն	собака
շուշան	лилия
շուտ	скоро, быстро
շուտասելուկ	скороговорка
շրթունք	губа
շրջազգեստ	платье
շրջապատ	окружение, среда
շփոթվել	смущаться, растеряться

Ո

ոզնի	еж
ոհմակ	свора, стая (волков0
ոչ	нет
ոչխար	овца, баран

ոսկի	золото
ոսկոր	кость
ով	кто
ոտանավոր	стих
ոտք	нога
որ	
որոշում	решение
որպես	как
որպեսզի	что бы
որս	охота
որտեղ	где

Չ

չաղ (գեր)	полный
չամիչ	изюм
չար	злой, непослушный,
չիր	сухофрукт
չորեքշաբթի	среда
չորս	четыре

Պ

պահարան	шкаф
պահել	беречь, хранить
պաղպաղակ	мороженое
պայուսակ	сумка, портфель
պանիր	сыр
պապ(իկ)	дедушка
պառկել	лечь, лежать, полежать
պատ	стена
պատառաքաղ	вилка
պատմել	рассказывать
պատուհան	окно
պատվիրել	заказать
պատրաստել	готовить, приготовлять,
պարապել	заниматься, заняться
պարել	танцевать, станцевать

պարզ	ясно
պարիսպ	ограда
պարկ	мешок
պարտեզ	сад

Ջ

ջինջ	чистый, ясный
ջղայն	нервный, сердитый
ջուր	вода
ջրհոր	колодец

Ս

սա	это
սալոր	слива
սակայն	однако
սահել	скользить, скользнуть
սահման	граница
սահնակ	санки
սանիկ	крестник
սանր	расческа
սանրել	расчёсывать, расчесать
սանրվել	расчесываться, расчесаться
սառը	холодный
սառնամանիք	мороз
սառնարան	холодильник
սար	гора
սեխ	дыня
սեղան	стол
սենյակ	комната
սեր	любовь
սերկևիլ	айва
սև	черный
սիրել	любить, полюбить
սիրելի	любимый (ая)
սիրուն	красивый, симпатичный
սմբուկ	баклажан

սովորել	учить, выучить, учиться
սուր	1.меч 2. острый
սուրբ	святой
սուրճ	кофе
սպասել	ждать, ожидать,
սպիտակ	белый
ստանալ	получить
սրբել	вытирать, вытереть, чистить

Վ

վագր	тигр
վազել	бегать, бежать
վախենալ	бояться, опасаться, испугаться,
վատ	плохо, плохой
վարունգ	огурец
վերարկու	пальто
վերմակ	одеяло
վերնաշապիկ	сорочка
վերցնել	взять, брать, поднимать
վերք	рана
վեց	шесть
վզնոց	колье, шарф
վիզ	шея
վիրակապ	повязка
վուշ	лен
վտանգ	опасность
վրա	на, над

Տ

տակ	под
տանձ	груша
տաշտակ	корытце
տասը	десять
տասնմեկ	одиннадцать
տատ(իկ)	бабушка
տարածել	распросттранять

տարեկան	лет
տարի	год
տարիք	возраст
տաք	тёплый, тепло
տեսնել	видеть, увидеть
տետր	тетрадь
տերև	лист, листва
տիկնիկ	кукла
տխուր	грустный, невесёлый
տղա	мальчик
տղամարդ	мужчина
տնակ	домик
տնօրեն	директор
տոմս	билет
տոն	праздник
տոնածառ	ёлка
տոնական	нарядный, праздничный
տորթ	торт
տուն	дом
տուր	дай
տուֆ	туф

Ր

րոպե	минута

Ց

ցածր	низкий, низко
ցանկանալ	желать, пожелать
ցանք	посев
ցավել	болеть, сочувствовать,
ցերեկ	день (светлая часть)
ցուրտ	холод
ցտեսություն	до свидания

Ու

ու	и
ուզել	хотеть, захотеть

ութ	восемь
ութսուն	восемьдесят
ուլ	козленок
ունք	бровь
ուշ	поздно
ուշանալ	опаздывать, опоздать,
ուշիմ	внимательный
ուս	плечо
ուսում	образование
ուտել	есть, съедать, съесть,
ուտելիք	еда
ուր	куда
ուրախ	весёлый, радостный
ուրբաթ	пятница

Փ

փաթաթել	мотать
փախչել	бежать, убегать, убежать
փայլել	сверкать, сверкнуть,
փայտ	палка, дрова
փեշ	подол
փիղ	слон
փնթի	неопрятный, неаккуратный
փողոց	улица
փոշի	пыль
փորձ	опыт
փոքր	маленький
փքված	надутый

Ք

քաղաք	город
քաղցր	сладкий
քամի	ветер
քայլ	шаг
քայլել	ходить, шагать, идти

քանի՞ հատ	сколько штук?
քանի՞	сколько?
քանոն	линейка
քառասուն	сорок
քար	камень
քեռի	дядя (брат матери)
քիթ	нос
քիչ	мало
քնել	спать, уснуть, заснуть
քնքուշ	ласковый, нежный
քույր(իկ)	сестра, сестричка
քսան	двадцать
քսուք	мазь
քրիստոնյա	христианин

Օ

օգնել	помогать, помочь
օգոստոս	август
օձիք	воротник
օտար	чужой
օր	день
օրինակ	пример
օրինակելի	примерный

Ֆ

ֆերմա	ферма
ֆիկուս	фикус
ֆուտբոլ	футбол